ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 27.10.2017թ.

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ Տ և ՀԿ վարչության ՎՏԱ բաժնի պետ, Կ. Պողոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՌԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռատյան,
ՀՀ ՊՆ ՌՈ հատուկ օպերատիվ ծառայության բաժնի սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյան,
Գնումների համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի ծառայող Վ. Սահակյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Վ. Սահակյան)

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5 դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Վ. Սահակյան)

1.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/5»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին **«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի** համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերի պահանջներին, իսկ տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝
- 5-րդ չափաբաժնում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրով ներկայացված է MacBook Pro կամ համարժեք մակնիշի համակարգիչ – մոխրագույն, 15″ դիսպլեյ, 2.7GHz quad-core Intel Core i7 պրոցեսոր, 3.6ԳՀց 16GB 2133ՄՀց, Radeon Pro 450- 2GB հիշողություն, մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում i7, 2.8GHZ, 16GB Memory, 256GB SSD, 15inches Retina Display, Radeon Pro 555 2GB GDDR5 Touch Bat Touch ID, MAC OS, English only Keyboard Backlight:
- 6-րդ չափաբաժնում հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրով ներկայացված է iMac կամ համարժեք մակնիշի համակարգիչ - 27″ Retina 5K դիսպլեյ, 3.4GHz quad-core 7-րդ սերնդի Intel Core i5 պրոցեսոր, մինչև 3.8ԳՀց, 8GB 2400ՄՀց, 1TB Fusion Drive 1, Radeon Pro 570- 4GB հիշողություն, երկու Thunderbolt 3 մուտք, Magic ստեղնաշար եւ Magic մկնիկ 2, մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում 27″5K, 3.4 i5, 8GB Memory, 1TB Fusion, Radeon Pro 4GB 570 Graphics Card, Apple Magic Mouse 2, Apple Magic Keyboard: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկում է մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:
1.2 Սահմանված ժամկետում մասնակիցի կողմից ներկայացված շտկված տարբերակով 6-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին, իսկ 5-րդ

չափաբաժնով առկա է տարբերություն հրավերով սահմանված պահանջների համեմատ: Համաձայն 30.10.2017թ. թիվ 962 գրությամբ պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը (Տ և ՀԿ վարչության պետ) կողմից տրամադրվեց մասնագիտական եզրակացություն, որով փաստվում է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համարվում է համարժեք:

Մասնակցի որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 06.10.2017թ. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները հանձնաժողովը որոշեց հնահատել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը համապատասխան **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/5»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համարժեք:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

1.3 06.11.2017թ. Հանձնաժողովը որոշեց հաստատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/5»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Վ. Սահակյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-12/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Վ. Գասպարյան
Գնահատող	Կ. Պողոսյան
Գնահատող	Գ. Ուստյան
Գնահատող	Ս. Նիկոլյան
Գնահատող	Կ. Բրուտյան
Գնումների համակարգող՝	Վ. Սահակյան

06.11.2017թ.